

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար  
 տարեկան 12 ֆր.  
 վեցամսեայ 6 »  
 Արսասահմանի  
 համար տարեկան 15 »  
 վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար  
 տարեկան 3 ֆր.  
 վեցամսեայ 1.50 »

Մանուգլան տղը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիլ է. երկուսն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը յայտարարուի:

Վառանայի համար  
 ձեռքի 10 սանթիլ

# ՇԱՐՔՇԱՐԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՔԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆԻ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԻ ԵՒ ՇԱՐՔՇԱՐԻ

ՇԱՐՔՇԱՐԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՆՈՒԿ ՎՃԱՐՆԵՐ

Նամակ եւ դրամ  
 խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ  
 „Шаржумъ“  
 Варна

Redaction du journal  
 „Char.oum“  
 (Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար  
 ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար  
 ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ  
 տրուի

## ՈՐՈՇԵՆՔ ԶԱՐՔԵՐԸ

Առանց գործի խօսքը մեռած է:

Ազգութիւնները, ինչպէս ամեն էութիւն տեղերքի մէջ, մշտական յեղաշրջումի ենթակայ են: Այդ յեղաշրջումները կը կատարուին աւելի կատարելագործուած ընկերական պայմաններ ձեռք բերելու համար, որովհետեւ մարդոց մտաւոր ու բարոյական զարգացումը անբաւական կը զարմնէ տիրող կարգ ու սարքը եւ նոր պէտքերու հետ նոր վայելքներ կը պահանջէ:

Այդ յեղաշրջումները սակայն առանց բաղադրումներու չէ որ տեղի կու տան. հակառակ եւ ընդդիմադիր տարրերու ընդհարումները անխուսափելի են ամեն բարեշրջումի համար, ընդհարումներ, որոնք յաճախ պատմութեան ամենէն եղբարական էջերը կը կազմեն, որոնք կը դանդաղեցնեն յառաջդիմութեան բնական ընթացքը, եւ նոյնիսկ կապանան համեմատաբար սկար կամ անպատրաստ ազգերու գոյութեան:

Իննականութեան լուծին տակ հեծող ազգերը, այն օրէն երբ քաղաքակրթութեան արդիւններին ծանօթանալով, իրենց վիճակին գիտակցութիւնը կատանան, յեն կրնար այլեւս հարգութիւն իրենց վրայ բռնացող երկաթէ ձեռքերուն, տիրող կամայականութեանց ու ճնշումներուն: Դժգոհութիւնը կը ծնի, որ տակաւ կը լայնանայ, կը տարածուի, կը շեշտուի, կը սաստկանայ ու կը պտուիկայ վերջապէս, ընդհանուր ազգայնամբռութեան ձեւին տակ:

Յեզգափոխութիւնը այն ազգակն է, որ իր մէջ կը խտացնէ ցեղի մը զատազրուութեան կոռուին բոլոր տարրերը: Անիկայ կը պահանջէ գերագոյն զոհողութիւններ, որովհետեւ գերագոյն վտանգի մը դէմ կոռուելու կոչուած է: Գոյութեան կոռուի այդ ճգնաժամային վայրկեանին այն ազգերը միայն կը յաղթանակեն, որոնք կըրնան շրջանին պահանջած զոհողութիւնները արտադրել: Եւ այն անձերը որոնք այդ զոհողութեանց արտայայտիչը եղած են, որոնք վայրկեանին ծանրութիւնն ըմբռնելով իրենց գրաւած դիրքին եւ իրենց վերայ ճանրացող պարտքին համեմատակարար զոհողութիւնները կարողացած են տալ, այդ անձերը պատմութեան մեծ ու օրինակելի տիպարները կը մնան. տիպարներ, արժանի մեր պաշտամուքին ու հիացմանը:

Բայց յեղափոխութիւնը մէկէն ի

մէկ չէ որ զինեալ կոռուի, ապստամբական հանգամանք կոռուի: Այդ կէտին հասնելու համար ազգը կանցնի բազմաթիւ յաջորդական փուլերէ, որոնք ամենայն ու Նախապատրաստողներ են վճռական մայր կոռուին: Կը բաւէ դառնալ մեր անցեալ վիճակին հակադրու համար այս ճշմարտութիւնը:

Ժամանակ մը երբ դեռ խիստ տեղիտութեան ու թմբուութեան մէջ ինկած մեր վիճակին դառնութեան գիտակցութիւնը չունէինք ու աղօթելը մեր մեծագոյն պէտքն էր, եկեղեցի մը կամ հիւանդանոց մը շինողը ազգային մեծագործ բարերար մը կը նկատուէր, որուն անխնայ կը նուիրէինք մեր ամենէն սրտաբուխ զգացումները:

Անցան տարիներ եւ հայութիւնը քաղաքական եւ քաղաքակրթական ազգեցութեանց տակ սկսեալ զարգանալ աւելի բազմազան պահանջներ ծնան իր մէջ, որոնց զլիաւերուն էր անկախ ապրելու տենչը: Զոհողութեան նոր տեսակներ անհրաժեշտ դարձան եւ զանոնք իրազգործելու համար երեւան եկան խօսքի ու գրչի մարդիկ, անվեհեր ու եռանդուն քարոզիչներ ազնիւ ու վեհ զաղափարներու, որոնք տիրող խաւարին դէմ անվախօրէն կոռու մղեցին, նորածիլ ազատութեան ձգտումները մշակեցին, անոր ուղղութիւն տուին, զայն գիտակցութեան հասցուցին: Անոնց կատարած գործը աւելի կարեւոր եւ աշխատութիւնները աւելի դառն էին, հետեւաբար անոնք աւելի շատ յարգանքի եւ աւելի մեծ համակրանքի արժանացան քան առաջինները եւ անոնց յիշատակը աւելի երկար ատեն կենդանի պիտի մնայ սերունդներու մէջ: Քան իրենց նախորդներունը, Պէշիք-Սալիբան, Բաֆֆի, Արծրունի, Դուրեան, Քաթիպա, Արովեան, Նալպանտեան եւ օրինակներ այս շրջանի ամենէն ցայտուն տիպարները կը ներկայանան:

Այս նոր գործիչներու ջանքերը արձագանք գտան, եթէ ոչ զեռ ընդհանուրի, զէթ երիտասարդ ու կրակոտ անհամբեր հնգիւններու մէջ, խօսքը գործի փոխուեցաւ, մարմին եւ արիւն առաւ այլեւս: Ազատագրութեան կոռուին էն սպառնական ու վրտանգալից ճգնաժամին էր որ բացուեցաւ որ գերագոյն ճիգերու եւ ամենէն կենսական ուժերու տրամադրութիւնը կը պահանջէր փոթորկալից եւ յուսահատու շրջան միանգամայն որ խորհրդաւոր երկուցի անուխ ցաւերը կապրեցնէ, որ աւելի կենսական եւ արեան հեղեղներու

մէջ նորածագ արշալոյսի պայծառ յուզումները կը պարզեւէ եւ որ միեւնոյն ժամանակ ընդունումի քսումները սարսուռներով կը զգեսնէ զքեզ:

Ու միեւնոյն ատեն եկաւ ճշմարիտ յեղափոխականը: Զրկանք տառապանք ցաւ, աքսոր, բանտ ու կախաղան իր անբաժան ընկերներն եզան, ու ան գիտակցօրէն է որ կը մտնէր կոռուի փշոտ ասպարէզը: Որովհետեւ իր զգայուն ու նուրբ հոգին կը բոցալաւեր կը վայրանար կը կատարէր կընդվզէր մարդկային ահուելի արարքներուն ի տես, վրէժի ու բողոքի կայծերը կը լեցնէին իր հոգին ու գերագոյն զբըզբուած զգայնականութեամբ մը կը նետուէր կոռուի դաշտը, ուր հոսող թշնամի արիւնը սրտին այրող ծարաւը կը մեղմացնէր, եւ հայրենիքի համար նահատակուելուն համոզումին մէջ գոհացումը կը գտնէր իր կրած զրկանքին, շարձարանքին, հալածանքին: Զայրոյթի ու պարտականութեան բուռն կիրքն է որ կը կերտէ, կը դարձնէ ճշմարիտ յեղափոխականը: Գոհացումը անոր ինչպէս պիտի բացատրեն Պուլկարացի Պետրոս անձնուիրութիւնը: օրինակի համար, որ մէջքի սուրին եւ ուսերէն շողողացող գարգամանկներու խոստացող փայլուն ապագան խորտակելով օտնակոխ ըրաւ դիրքը, յաջողութիւն, փառք ու պատիւ լեռներու ամայնութեան մէջ մերկ ու բուրկ, անօթի հալածուելու եւ կախաղանի վրայ անմահանալու համար վերջապէս, առանց դրդուած ըլլալու ո եւ է ինքնակոչ քարոզիչ մը: Նոր ազատ Պուլկարիոյ երջանիկ կեանքը, պուլկար ապստամբութեան խանդավառ էջերը, հայկական շարժումներու ազդարարող մտաւոր արշալոյսը կրակեցին հրդեհելու արգէն կազմ այդ սիրտը որ իր ճշմարիտ հերոս եւ անխաղախ ախոյեանը իր քարոզած գաղափարին կամովին զոհուեցաւ, առանց անոր իրականացումը տեսնելու... Պետո, Վազգէն, Մուրատ, Գնուկ, Արտաշէս, Բարկէն, Զաքարեան եւ օրինակներ, զարգացած, ու անձնական ապագայ կերտելու մարդիկ մեր յեղափոխական համայնապատկերին ամենալուսաւոր դէմքերն են, որովհետեւ ամենէն աւելի զոհեցին ու տանջուեցան: Ու որքան ալ անասման ըլլայ մեր հիացումը նախորդ շրջանին խօսքի ու գրչի հերոսներուն հանդէպ, այս վերջիններուն է որ անպայմալօրէն պիտի վերապահենք մեր գերագոյն պաշտամունքը, որովհետեւ անոնք եղած են ամենամեծ զոհողները, որովհետեւ անոնց

մէջ կը գտնենք խօսքի ու գործի համերաշխ գոհքը թողութիւնը անձնագոհութեան անժխտելի փաստերով ընտրագործուած:

(Շարունակելի)  
 Տրամաբանութիւն  
 Գերմանիա

Վառնա, 8 Մայիս 1905

Յարգելի խմբագիր:

Անոնք որոնք կը կարծեն գիտնալ թէ, իշխանապետութեան մէջ առաջնորդութիւն մը հաստատուելու առթիւ, անցեալ տարի, Պուլկարահայոց մէջ տիրապետող ոգեւորութիւնը ոչ այլ ինչ էր եթէ ոչ վահան վարդապետ Յակոբեանի թելադրութեանց արդիւնքը: մեծապէս կը սխալին, եւ ոչ միայն կը սխալին այլ կը մտանեն միանգամայն ինքզինքնին իր միամիտ եւ ամենաանշանկ երեւոյթներէ յախշտակեող խեղճ արարածներ եւն. Իսկ անոնք որոնք այդ վեղարաւորի մտաւորական եւ բարոյական կորուցութեանց տանկութիւնը լաւ հասկցած եւ ճանշըցած են, համոզուած են անշուշտ թէ նորա թելադրութիւնները ո՛չ միայն չէին կրնար եւ ոչ մի իրազգործելի հանրագոտ գաղափար ներշնչել, այլեւ տեղի կուտային ու շարժելու: Կարգաւ անոր հոգեկան դեղնագոյն նկարագիրը՝ որ շողողութեան եւ արծաթապատութեան քաղաքակրթական արժանի արարք մը կը ներկայացնէր: Աւելորդ է, կարծեմ, յիշել թէ այն րոգհանուր ոգեւորութիւնը, զոր Պուլկարահայոց թիւնը, առաջնորդ մը ունենալու եռանդով, անակնկալ կերպով արտայայտեց, ուրիշ շարժաթի չէր ունեցած բայց եթէ պէտքի մը անզսպելի զգացումը՝ զոր ծանակիւն ոգին արդէն ներշնչած եւ պատրաստած էր եւ զոր ամենաթեթեւ գրգռումը բաւական պիտի լինէր շարժելու արժարձելու: ուրիշ ոչինչ:

Գալով պատգամաւորաց ընտրութեանց եղանակին, աշխարհական պատգամաւորները՝ որոնք թուով տասը էին, ընտրուեցան գրեթէ բոստանմանադրական օրինաց, ընդհանուր քուէարկութեամբ, իսկ կղերականները՝ չորս հոգի, նշանակուեցան, ապօրինի կերպիւ, միապետական գրութեամբ, այսինքն Վ. վարդապետի քանաճոյից արամադրութեամբ:

Այս տեսակ սահմանադրական զեղծում մը որով վահան վարդապետ

ինքնին անջան իրաւունք տալու յանդգնութիւնը ունեցաւ որքան իրաւունք որ ունէր ամբողջ Պուլկարայեան երկու հինգերորդ մասը, թէպէտ ժամանակին անբողոքի մընաց, սակայն ոչ մի քննադատի ուշադրութենէն վրիպեցաւ, մանաւանդ անոր որ մարդկային իրաւանց հասարակութեան սկզբունքը խորապէս յարգելու գիտակցութեամբ ունի: Հասկնալի էր թէ Վ. վարդապետի սոյն ապօրինի ձեռնարկութեամբ, որուն նպատակը ոչ ոքի համար գաղտնիք մըն էր, յանկարծ ջուրը ինկաւ երբ պատգամաւորական քուէատուփը փոխանակ Վ. վարդապետի, Ն. Եպ. Ասլանեանին կը նուիրէր Պուլկարայեան առաջնորդութեան տնօրէնը, անոր որ թէեւ պատրիարքարանի ներկայացուցած թիկնածուներէն մէկն էր, սակայն ինչ որ քստմնելի արգելքներու նախապայտով չի կրցաւ գալ բազմելու, իւր ստանդարտական գահը:

Ուստի, եթէ առաջնորդական պէտքը արտայայտող ժողովրդական եռունդը միշտ վառ եւ արծարծուած կը մնայ, այնպէս ինչպէս էր անցեալ տարի, ո՞ն ուրեմն, աշխատինք համարախօսքէն զոնացում տալու այնպիսի հանրագումար պէտքի մը՝ որ ըստ բազմաց անհրաժեշտ կը համարուի:

Գ. Տ. Նզնիկ Եպ. Ապահունին՝ որոյ մտաւորական եւ բարոյական արժանաւորութեանցը մեծ կարեւորութիւն կը տրուի, այսօր Եգիպտոս կը գտնուի, թէպէտ առանց պաշտօնի, սակայն նորին գերապատուութեան բարեմասնութիւններովը օժտուած տաղանդաւոր եկեղեցական մը՝ չենք կարծիր որ ընդերկար առանց պաշտօնի մնայ:

Առիթն օգտուելու ժամանակն է. լուսութիւն ու անշարժութիւնը չեն կարող եւ ոչ մի եղանակաւ բաւականութիւն տալ մեր իղծերուն, հանրային պէտք մը որ անցեալ տարի այնքան զգալի կերեւար՝ չէր կարող նոյնը լինել զգալի այսօր, եւ անցեալի մէջ տեղի ունեցող այնպիսի զուգորդութեանց արգելքները եղած էր, չպէտք է վհատեցնէ մեզ, այսօրուան այնպիսի լուսութիւնը ինչորքոյ բարեպատեհ հանգամանքն

րու, կրնայ վաղը յաջողութեամբ փոխարինուի: Ե. Եպ. Ապահունին, րատ արժանահաւատ վկայութեանց, արամադիր լինել կերեւի մեր բաղձանաց նպատակին համակերպելու:

Այս առթիւ պէտք է որ գաղափարակաւէն գործնականին անցնինք եւ նախնական կարգադրութիւնները վաղ ընդ փոյթ կատարելով քաղաքակրթական ձեռնարկներ յանձին նորին Գերապատութեան՝ որ կը կրկնեմք ցարդ ազատ լինելով, այսինքն առանց պաշտօնի, յօժարութեամբ պիտի ընդունի պուլկարայեան ստանդարտութեան ոչ նուազ նախանձելի փառաւոր պաշտօնը:

Հստ մեզ, որպէս զի խնդիրը գործնական եւ արդիւնաւոր ուղղութիւն մը առնէ, պէտք է անոր պաշտօնական հանգամանք մը տալ յանձնելով գործին նախաձեռնութիւնը թաղականութեանց, որոնք, իբրեւ ժողովրդի ներկայացուցիչները, ի նկատի ունենալով հանրային շահը՝ որ կը թելադրէ զիրենք, չպիտի զլանան անշարժ նուիրել իրենց ջերմ եւ անկեղծ աջակցութիւնը յօգուտ խնդրոյն իրագործմանը:

Թաղականութեանց նախկին գործը պիտի լինի ի հարկէ, ի ժողով գումարել իւրաքանչիւրը իւր սիջակայքի ամբողջ հայութիւնը զոր կը ներկայացնէ, ապա ենթարկել ընդհանուր ժողովոյ ուշադրութեանը հետեւեալ ամենակարեւոր երեք խնդիրները:

Ա.— Թէ Առաջնորդութեան պէտքը պուլկարայեան համար միշտ զգալի կամ անհրաժեշտ է, որպէս էր անցեալ տարի:

Բ.— Թէ Առաջնորդական տարեկան պիւտեճին ի՞նչ եղանակաւ պէտք է հայթայթել եւ ի՞նչ միջոցներով ապահովել զանի:

Գ.— Գեր. Ե. Եպիսկ. Ապահունիէ զատ ժողովուրդը ունի՞ կամ կը ճանչնայ աւելի արժանաւոր եկեղեցական մը իբր առաջնորդական ընտրելի:

Այս խնդիրները լրջօրէն քննուելու պարզութեան յետոյ, արուած վերջնական որոշումները թաղականութեանց միջոցաւ պատգամաւորաց կը հաղորդուին. այս վերջիններն ալ խորհրդակցելով միմեանց հետ կը ձեռնարկեն այնպիսի առաջնորդական

քաղաքակրթական, վերջ տալու համար այնքան կուսակցական հակառակութեանց՝ որոնք շուրջ երկու տարիէ ի վեր ազգային ընթացիկ գործոց երբեմն ղեղձմանց եւ երբեմն խանգարման պատճառ դարձած են:

Աստ աւելորդ չենք համարեր երկու խօսք եւս աւելցնել խիստ կարեւոր խնդրոյ մը մասին որ որ բաժի Իրաւունք լրագրէ, որ իր 25, 26 եւ 28 թիւերու միջոցաւ ըստ բաւականի քննադատութեանց առարկայ ըրաւ զայն, մինչեւ ցարդ ուրիշ ոչ ոքի կողմանէ մասնաւոր նկատողութեան անուած է, այն է պուլկարայեան ստանդարտական կամ պատգամաւորական ընտրութեանց մասին Պատրիարքայանի կարգադրած մի նոր ընտրողական ձեւը՝ որ բոլորովին հակասահմանադրական ըլլալով, այսինքն անհատական իրաւունքները ոչնչացնելու բնոյթը ունեցող բանապետական զրուսեան մը ճիշդ մէկ պատկերը, սկսածայ հետեւեալ երկու ենթադրութիւնները ընել կուտայ մեզ:

Կամ այն է թէ, պատրիարքարանի կարծեօք, պուլկարայեանը մազկային իրաւունքները ճանչնալու կարողութենէն բոլորովին զուրկ, իբրեւ նախնական մարդկիներ, տրամադիր եղած լինին խնդրութեամբ ընդունելու ամեն ինչ որ պատրիարքը կը տնօրինէր, եւ կամ թէ, պատրիարքական վարչութիւնը, քմահաճոյից չ'աստուածութեան մէկ մասնականաբար, առանց երբէք կարեւորութիւն տալու պուլկարայեան մըտաւորական զարգացման աստիճանին կուզէ խաղալ անոր հետ այնպէս ինչպէս նախնական բանակալներու պէրջիւն մնացորդները՝ դեռ կը նկատեն խաղալ բովանդակ մարդկութեան հետ...:

Ընթերցողը շատ լաւ կը հասկնայ անշուշտ թէ մենք, ապրելով սահմանադրական երկիրներու մէջ ոչ միայն սկզբունքով սահմանադրական եղած ենք՝ այլ եւ ի սրտէ կը ցանկանք որ մեր ազգային ներքին գործերը զոնէ անկասօրէն, այսինքն սահմանադրական ոգւոյն համեմատ կատարուին:

Սահմանադրական օրինաց ոգին է ճշմարտութեան ձայնը՝ որ կը գոչէ՝

անվեհեր, Ազատութիւն եւ Իրաւանց հասարակութեան:

Իրաւանց անհաւատարմութիւնը բռնապետական դրութեանց քաջարձակ սկզբունքն է որ կը արամադրէ բռնաբարել ու ոչնչացնել մարդկային թէ բնական եւ թէ վերացական բոլոր օժիտները:

Ո՛վ որ լսելու ականջ ունի թող լսէ:

Վերադառնալով մեր խնդրոյն կը յարեմք թէ երբ պատգամաւորական մարմինը վերջնականապէս կը կատարէ իր պաշտօնը՝ այնուհետեւ քաջաժը կը մնայ առաջնորդի վաւերացման խնդրոյն որ ըստ մեզ, պարզ ձեւակերպութենէ մը աւելի ոչ մի կարեւորութիւն ունի, բաւական է որ առաջնորդ եւ ժողովուրդ համեմատ խօսքն միմեանց սիրեն. սակայն որպէս զի վաւերացման ձեւակերպութիւնը անհրաժեշտ համարողներու խիղճը եւս հանգիստ ըլլայ, այս մասին ի նկատի ունենալով Պատրիարքարանի միակետական վարմունքը հանդէպ մեզ, մենք աւելի նպատակայարար կը գտնենք զիմել ուղղակի էջմիածին, Ամենայն Հայոց Հայրապետին՝ որ ինչպէս գիտենք ի բնէ սահմանադրական ստեղծուած, առաւել քան Պոլսոյ պատրիարքը, հեզիտակութիւն եւ իրաւասութիւն ունի մեր ընտրած առաջնորդ վաւերացընելով լիովին յագուրդ տալու մեր իլծերուն:

Գ. Օրինակ մը եւս «Իրաւունք» զրկուած է:

ՄԻ ԼԱԻ ԽՕՍԲ

«Ներսիս ու Նի»  
ԲԻՍՄԱԿ

Սա մի լաւ խօսք է, արժէ լաւ ուշադրութիւն դարձնել. այո՛, շատ ճշմարիտ մի խօսք է որ բնէ՛ք ու շէ՛տ:

Թէ ի՞նչպէս, — մենք առ հասարակ սովոր ենք ասել հետեւեալ բանաձեւերն զմեզ արգաւորացնել կարծելու նպատակաւ. Օրինակ

Ա. ԱՄՏԻՑԵԱՏՐՈՎ  
ՎԻԿՏՈՐԻՍ ՊԵՎԼՈՎԻ Ա.  
(Տօնախմբութիւն)  
—o—  
(Գրագիտի յիշողութիւններ ինչ, Ամրան արկածներ բարակակ սարսփեակ հա սարսփեակ մեք)  
—o—  
(Թարգմ. ուսուցիչից)  
Է.  
(Շար. նախորդ թիւին)

Վիկտորիա սրբից վազող արցունքի կաթիլը ու մի քիչ լոբլուց յետոյ շարունակեց:  
— Ահա վրա հասան դպրոցական արձակուրդները, ես հայրենիք վերադարձայ եւ ծանօթացայ իշխանի հետ ու սիրահարուը սկսվեց: Սկզբում

ես անշափ երջանիկ էի. բոլոր հոգերս վերացել էին. կեանքը այնքան պայծառ, խօսուծ, ջերմ. անտառը աւելի կանաչ է երեւում թռչունները աւելի քաղցր երգում, եւ արեւը աւելի վառ է լուսաւորում...:

Տնեցիք էլ են ուրախանում. գործը լաւ է գնում. իշխանուհի պէտք է դառնա. իսկ հօրքոյրս էլ մի օր անմտութիւնն է ունենում բացական չել. — փառք քեզ Աստուած, որ ըրիկին փրկեցիր. — այժմ Վիկտորիա, քու մեղքդ կը ծածկվի, շնորհակալ պէտք է լինել որ բարի մարդ գտնը վեց. Միայն զու Վիկտորիա, լաւ նայիր. ձեռքիցդ չը փախցնես որսը: Տես սանձը զուր բաց չը թողնես. չէ որ դուք աղջիկներդ յիմար էք, սիրահարվում էք թէ չէ, իսկոյ կակուում էք. Ա. Ա. սա պէտք է ամեն բան խոստովանեմ քեզ, ու յանկարծ խոստովանում են. իսկ փեսան անպիտանը մէկ էլ տեսար կրուելը դարձրեց:

Է՛հ, եթէ դուք կարողացել էք մի քիչ գոնէ ճանաչել ինձ եւ հասկանալ

իմ նկարագիրը, կարող էք դուշակել թէ այդ իմաստագոյն խորհուրդը եւ խրատները ինչ արդիւնք ունեցան ինձ համար. Անտառն էլ սեւացաւ, արեւն էլ խաւարեց, թռչուններն էլ դադարեցին երգել, Բլրը իմ ինքնամոռացութեան ջանքերս, ինքնադարացումներս եւ քայքայութիւններս օգը ցնդեցին. ու հասկացայ որ ես անիծեալ եմ, եւ որ ինձ վաճառական Պարուկովի սերուհուս վայել չէ կիրք լինել իշխան Բէլապիլիսկու նման մի պայծառ մարդիկ եւ չըրա պատաւար կիսնքը մտապէս կապել իմ սրբազոյժ կեանքս հետ... Եւ անհայտ միջոցին իշխանը սկսեց առաջարկութիւններ անելու իսկ ես մերժել. իսկ հօրքոյրս սարսփում եւ արտասվում էր, անխաղճ օր ես հրաշարի առիթը պէտք է փախցնեմ միլիոնատեր իշխանուհի դատնալու... Եւ երբ եպ աշունը Պետերբուրգ էի վերադառնում սիրտս կտոր կտոր էր լինում. Սիրել, սիրել էլ չեմ համարձակվում. ես անիծեալս, անպիտանս: Է՛հ, քանի որ անիծեալ

եմ եւ կեանքս էլ է անիծված, ես էլ չեմ սիրի, կեանքս կայրիմ, բայց կը մոռանամ:

Պետերբուրգում զուրխս դարձաւ փոթորկի պէս. դժուար է միթէ գեղեցիկ օրերդի համար, այն էլ արտիստական ճամբի վրայ բաւ է միայն մաքր շարժել եւ այլ մարկանց շրջանակը կտնդվի. Առաջ դատարանի ստէպ յաճախել կօնսերվատօրիս վերջը բոլորովին թողի. Ազգեցի Սովինա դառնալ եւ մտայ գերատեսական դպրոցը: Ուսում քիչ կար, իսկ սիրաբանութիւն որպիսի կուղես: Մէկը միւսից յայտնի եւ հետաքրքիր տղամարդիկ շուրջս պտտվում են, Դրսի զբօսանքներ, ընթերցանք, ցեղաներ, սահնակով սբօսանքներ. ինչքան կուղես: Դիմականադէսներն էի յաճախում, միշտ հետաքրքիր, գիւլային, գերմարդկային հերոսներ էի փնտրում: Է՛հ, ոչ ոք մէկը հոչակվում էր իբրեւ նշանաւոր գրագէտ, փաստաբան, բանաստեղծ, երաժիշտ եւ լուր էր տարածվում որ այսինչ կինը վրովը կախվել է, իսկոյն անս

երբ մեզ հարցուէր թէ ինչո՞ւ չես կարգուել... ժամանակս անցաւ, էլ ինձ համար ուշ է:

Մինչդեռ այդ պատասխանաւորն երեսունից քառասուն հասնելու եղած լինի. և կարծես թէ, այդ խօսքովն արդարացաւ ու պրծաւ գնաց:

Յիշելու ենք թէ, պարօն, «երբէ՛ք ուշ չէ՛» այլ կարգուիր:

Մի օր իշխին հարց կուղղենք, Տիրար, է՞ր այս բանք, գործը, արհեստը կամ գիտութիւնը չես փափագում սովորել:

— Ո՞նց կարամ սովորել, էլ ժամանակս անցկացաւ, անընդունակ եմ դառել ևն. Սա էլ իրան այդ պատասխանովն կարծում է թէ էլի արդարացաւ պրծաւ. մինչդեռ ցոյց տուց իրան ներքին մարդուն անկարգիւր և հիւանդ լինելն. «արուններ զձեզ բուժելու և ձեզ անուամ անացինը. կարագիր և կորով ստեղծելու ամենակարճ ճամբան է միշտ մտաբերելն «երբէ՛ք ուշ չէ՛» ազնիւ խօսքն, ու նետուել ասպարէզ և պիտի տեսնէք թէ կարող և թէ միանգամայն ընդունակ էք եղել:

Մի տեղ պատահեց մեզ խօսակցել մի քանի տարեց մարդկեանց հետ: Յայտնի է թէ, շատ դժուար բան է սրանց տեսակներին դուրս պոկել իրանց հոտերից, այսինքն նրանց ունակութիւն դարձած համոզմունքներից նախապաշարուածներից, որոնք գրեթէ արանց միտու ոսկորն են դառել. ձեզ պիտի պատահի նրանցից ստէպ լսել «էսպէս էկել ենք, էսպէս էլ զնալու ենք». Թէև այս անմիտ խօսքը պինդ կաշկանդում է նրանց, բայց էլի «երբէ՛ք ուշ չէ՛» ուղ կուտելու է և պիտի տեսնէք որ պիտի յաջողուէք: Ես փորձեցի, «երբէ՛ք ուշ չէ՛» բացատրելով. նրանցից մէկ երկուսը խորհիլ սկսան և լա-

տպաւորութիւններով բաժանուցինք. մի քանի օր վերջ՝ այդ մարդիկ ինձ կանչեցին որ էլի խօսեմ «երբէ՛ք ուշ չէ՛» մասին. յաջող ամսին տեսայ կարգալուց բեզար մարդը. Բաֆֆի Նէյլը Զալախտինը անութի տակովն կը գնար. էնքան ուրախացայ որ չեմ կարող ձեռք էլ բացատրել իմ ներքին հրճուանքս, զի մի լաւ գործ կատարել եմ «երբէ՛ք ուշ չէ՛» խօսքն բացատրելով, այդ մարդը կարգալուց ձեռքը քաշել էր. բայց «երբէ՛ք ուշ չէ՛» նրան սրտապնդել ու սովորեցրել էր Բաֆֆի Նէյլը, հոգաւ մատաղ էր ի՞նչ հանկի բաներ գրել ես «ասելով բոլոր գործերը կարգալ»:

Մենք ունինք ո՛չ սակաւ յոռետեսներու շարքեր ամեն դասակարգից որոնցից ամեն մինը փորձուածն իրամարկի դերեր կատարել հայի գլխուն. «Լահվէտները քունչէքուժը կեղտոտ սեղանները շուրջը կողուած վարժ են էս հանկի պատգամներ որոտալ, «էլ մեզ համար փրկութեան յոյս չկայ, մեր տեղն ու դիրքն մեզ աննպաստ են ևն. ևն.» էս տկճոր իրամարկներին կողքերին նստել են ցինըք հացկատակներ՝ գլուխին վար պետերն ու մօրուքնին վեր ցցած էնտելիգէնաներ «Ի՞նչուք ես ասում աշխարհ արձագանքում են յիմարաբար»:

Կարկեցէ՛ք բերանքդ, ծէր թութիկներու սաներ և լօրիկներու տղերք. յիշեցէք միշտ «երբէ՛ք ուշ չէ՛» ու փոխեցէք ձեր այդ յիմար համոզումներն և այս օրից գործի սկսեցէք ու գալ տարի պիտի տեսնէք ու համոզուիք թէ այո՛, ձեզ անում շատ փոփոխութիւններ են կատարվել՝ փրկութեան յոյսն ու համոզումն ստեղծուած պիտի գտնէք ձեզ անում, և գոհունակ շնչով պիտի ասէք

իրովի «լաւ որ անցեալ տարուից սկսանք գործի են»:

Հայրե՛ր, գրեցէ՛ք ձեր տան պատերի վրայ խոշոր տառերով «Ի՞նչ է Ո՞ր Զէ՛» խօսքն և ի՛նչ գործ կամ խորհուրդ որ ունենաք աչքերնիդ քցեցէք վրան. ու այդ բառերն ձեր տան բոլոր անդամներին պիտի ներշնչեն քաջութիւն և ինքնափառահովութիւն: Եւ դուք էլ ո՞վ պի. ուսուցիչներ և ուսուցչուհիներ, փորձեցէ՛ք այս խօսքը իբր գեղջիւղի ձեր այն ուսանողներին համար որոց բարքերն ու նկարագրերն արդէն մեղկացած ու թուլացած են երկուց. երբ ունեցան ձեզ պէսերն իրենց ուսուցիչ:

ՄԱՅԻՍ 11

2 Ապրիլ 1905

Հարեւան քաղաքից

ՆՄԷՆ ԵՒ ԹՈՒՐԲԻԱ

Եմէնում իրերու կացութիւնը թուրքիոյ համար բոլորովին տիրալի կերպարանք առած է. Այս վայրկեանիս այդ ամբողջ վիճակը տիրապետուած է ապստամբներու կողմէն, որոնք արդէն ապստամբական կառավարութիւն մը հաստատած են և իրենց արտաքին գործոց նախարարը ընտրուած է ուսումնական իրաւագէտ Սայիտ պէյը, որը երբեմն գաստու էր Պոլսոյ քաղաքական դպրոցին մէջ և էնթրիգներու շնորհիւ աքսորուած էր Եմէն:

Պոլսոյ մէջ շատ ազէկ գիտեն որ իրզա փաշային պարտութիւնը տեղի ունեցած է շնորհիւ այն հանգամանքի ոչ արաբ զինուորներու մեծամասնութիւնը անցած է ապստամբներուն կողմը:

Այս երկու յիշուած հանգիսն նշանակութիւն ունի թուրքիոյ հատարեց եւ ինձնից շատ աւելի յանդուգն, եւ ամօթալիթուն փորձված վերջերը հաւանական է որ նրանք վերածվեցին բացայայտ քոթոններ: Անպիտան կեանք, անպիտան զգացումներ եւ անպիտան խօսքեր: Ըրդամարդիկ ուրախ են. — հր. սեր պտուղն է, օրիորդ առանց նախապաշարուածների. զարգացած է խէրկայ, Յիմարութիւնը կանցնի. ամէն մարդ կուզէ սիրուելի պահել: Եւ մեզ զարգացնում էին. ամեն օր շուր ենք ծեծում, անմիտ սիրախօսութիւններով, շուրկով լսում անպիտան անէկտոսներ, անբարոյական տղտեղութիւնները: Գիրք են բերում կարգալու, կամ խորհուրդ տալիս ու եւ է գիրք կարգալ, իմացիր որ ֆրանսական Պօրնագրաֆի է: Գլխուժը մի տեսակ հնդուցիչ շոգ կայ. սիրտը դատարկ, հոգիդ կաֆէ շանտան է: Պայծառ վայրկեան է պատահում, թափանցում ես ներքին աշխարհդ. ցաւում ես խղճմանքիդ վրա եւ սկսում լալ... ու ահա իսկոյն վրա են հասնում ընկերուհի-

մար, որովհետեւ իթէ Եմէնի բոլոր պօրքերը անցնին ապրստամբներուն կողմ, այն տեսն թուրքիա պարտաւորուած պիտի ըլլայ ոչ թէ ապստամբութիւն մը ճնշելու այլ Եմէնը կրկին տիրապետելու, որը մեծ գրգռախտութիւն մըն է թուրքիոյ համար: Երբ թուրք կառավարութիւնը կը մտաբանէր հայոց, կըրէտացիներու և մակեդոնացիներու դէմ, կը մխիթարուէր անով որ այդ նահանգներուն մէջ տեղի ունեցող յուզումները կը ստեղծուին քրիստոնեայ տարրերու կողմէ. որոնք կրօնական տեսակետներով կը մղուին անշատուր թրքական իշխանութեանէն: Բայց այսօր Եմէնի մէջ ուղղափառներու վեհապետին դէմ ապստամբած են միւսուրմաններ ու հիմակ այդ ապստամբութիւնը քրիստոնեաներու էնթրիգներու արդիւնք հաշուել անկարելի է: Եւ ապառ պարզ է որ այս ապստամբութիւնը արդիւնք է թրքական վարչական սխառման, որով բընականութեանց շահերը բարձի թող ընելով, որոնք կը յայնձանուին ոսծիկ շտայցող պաշտօնեաներու կամայականութեանց: Այն բոլոր սխառումները, որոնք կրնան տեղի ունենալ, կատարուած են Եմէնի մէջ, եւ զարմանալի չէ որ արաբ բնակչութիւնը ստեղծեց այս լուրջ շարժումը:

Թուրք կառավարութեան վերջին սխառան էր, որ ապստամբութիւնը խեղդելու համար արաբական զինուորներ զրկեց, որոնք բնականօրէն կը համակրին իրենց եղբայրներուն թուրք լըծէն ազատուելու ձգտումներուն: Կայսրութեան մէջ արաբները մօտ 15 միլիոն կը կողմեն, իսկ իրենք թուրքերը միայն ութ միլիոն են և արաբները միշտ հե-

տորագիր նամակ էր գրում, յայտարարելով. — Երկէ այսինչ տեղը-դիմակ կալիս չէ. այդ յաղթողները շատ գիւրուածեմք են գալիս. գընում ենք. Ասում ենք ձեզ համար պատմում են որ դու շան անբարոյական ես: Պատասխանում է՝ դիմակ, դու շատուրը հաղցերն տալիս: — Ինչո՞ւ այդպէս անբարոյական ես: — Դիմակ, դու յիմար կին չես երեւում եւ պարտաւոր ես հասկանալ որ տաղանդը չէ կարող գոհիկ բարոյականութեան շրջանակի մէջ սեղծվել: — Արեւի դու նրա համար նս պնդարոյական ցը տաղանդաւոր է՞ս: Կեմ թէ տաղանդաւոր ես, որովհետեւ այդպէս անբարոյական եմ: — Երբ հոգեբանական հանելուկ է, պատասխանում է. տաղանդը... իսկ ցը դիմակ շամպանեան գինի ուղղումներ: — Յիմար...»

Այդ ամենիցս ընթացքում սիրտն ին վեպերի մի ահագին գրադարան ունեցայ, թէեւ ոչ ձիւ հետ չը մըտերմացայ. չը գիտեմ ինչպէս դիմացայ. բայց այլ եւ ձախ սիրախաղու-

թիւններ արի ամենանգուժ ստորութեամբ: Սափանան գիտէ թէ մինչև ինչ աստիճանի հասայ. այսօր մէկի հետ, վաղը միւսի հետ էի համբուրվում: Եւ շատ ուրախ ու գոհ էի, որ զիւային աղջկայ հոչակն էի ստացել: Կարմէն, մի խօսքով. այնպէս որ, իմ պատճառով, ինչպէս գնչուները երգում են, մէկը անձնասպան եղաւ, միւսը ջուրն ընկաւ, իսկ երրորդին սատանաները տարին: Այդպէս դժբախտութիւն, փառք Աստուծու, չունեցայ, միայն ինձ վրա հրազէն պարպեցին. մի ուսայնող, առաջին դասից, Նըպանակին հասաւ, բայց կծրուէս փրկեց, գնդակը կորսէսիս մէջ մնաց: Այնքան երջանիկ էի որ այդ դէպքը առանց վկանների տեղի ունեցաւ եւ ոչ աղմուկ բարձրացաւ եւ ոչ էլ զատ տեղի ունեցաւ... Ընկերուհիներ ունեցայ, երկու անամուսին կիներ, մի այրի եւ մի կիսակոյս, որը իբր թէ նոյնպէս դերասանութեան էր պատրաստվում: Ամէնքն էլ ինձպէս փոթորկոտ կին, միայն ինձնից աւելի

ներս... — հոգիս վիկտորիա, կարդացեր եւ կստիլ Մէսէսը, ինչ ինչպէս մարկիդուհին մի քօջօթի մօտ ազախն է վարձվում կը ինչէ գոյս գալիս դրանից, Այս, կարգա սիրելիս, շատ հետաքրքիր է. մեզուժ այդպիսի բաներ չեն նկատագրում. ինչպէս ետ ենք մնացել եւ լուրջ իջ, որչափ. վիկտորիա, ինչ էք կարծում, Լէդան եւ կարապր առասպել է, թէ իբրք բնութեան մէջ կարող է այդպիսի գեղեցիկութիւն գոյտ: Թիւն ունենալ... վիկտորիա դուք պէտք է Լէդա լինէք. հը բայց լրսել էք նոր անկատարը. ու այնպէս ստում են քեզ, ստում ես եւ դու իւմենք այդ ամբողջ տարին ոյդ պէս անցրինք, փաշայնք, ուսով գլխով ընկղմեցինք այդ պիսի բոսական անբարոյականութեան մէջ, որ այժմ յիշելն անգամ զգանք է սրտաճառում:

(Շատուրմակի)



ու պահուած են պետական կարեւոր պաշտօնեաներէն: Զօրաբանակին մէջ արար գնդապետ մը անգամ չկայ եւ արարական վաշտերը թուրք կամ քիւրտ բաւաներու հրամանատարութեան տակ զրկուած են ինչպէս:

Բոլոր երեւոյթներէն կերելի որ Եմէնը ճնշելու գործը երկար ու կործանիչ պիտի ըլլայ: Մաքառուը երկարատեւ է, որպէս զի մեր թշնամին աւելի թուլնայ ու մեր մաքառումին գործն ալ դիւրանայ:

Որչափ ազէկ բան է եղած իրական ուժը: Արարները ապստամբեցան, իրենց համար ժամանակաւոր կառավարութիւն հաստատած են, խրոխտարար պահանջներ կը դնեն բռնապետին առջեւ, ու հաւանական է որ կամ պիտի ազատին կամ արմատականօրէն իրենց կացութիւնը պիտի բարեփոխեն և այդ ամենը տեղի կունենայ առանց եւրոպացիի մը ճաշին, ու կոկորդիլոսի արցունքներու:

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Վերջին ժամանակներս Մակեղոնիոյ ներքին և արտաքին գործիչներու միջև իրարու մէջ ունեցած դժգոհութիւնները ծայրահեղութեան կը հասնին, այնպէս որ մինչեւ անգամ զիրար սպաննելու ելած են:

Հակառակութեանց զլխաւոր պատճառը ան է որ ներքին գործիչները չեն ուզեր զեկազարուիլ դուրսը նստողներէն և չեն ուզեր որ դուրսը նստողները իրենց իրաւունք համարեն հրոսախմբեր զրկել Մակեղոնիա, անժամանակ յուզումներ առաջ բերել, և անտեղի խտուրթիւններու ու հակահարուածներու տեղի տալ:

Այս ապրիլ 6 ին Մակեղոնիոյ ներքին կազմակերպութիւնը Պուլկարիա ետ վերագրաճուցեր է Սթոյանովի հրոսախուժքը, որուն հանդէպ բաւական խտուրթիւններ գործադրած է: Այդ հրոսախուժքը ետ զրկած միջոցին ներքին գործիչներէն Սանտանսֆիլ ճառ մը արտասանած է որմէ ինչպէս և անոր ստորագրութեամբ հրապարակելով շրջաբերականէ կը հասկցուի թէ Մակեղոնիոյ իրական յեղափոխական գործիչները խստիւ կատեն զանոնք որոնք մակեղոնական գատը կը շահագործեն իրենց եսին և փառքին համար, կամ թէ իրենց իրելու ա թ ո ա գործ կածեն պալքանեան պետութեանց քաղաքականութեան մէջ:

Այս առթիւ նա ր օ տ ն ի յ Պ Ը ր ա վ ա թ եր թ ր որ մակեղոնական խնդրին ամենէն համակիր

և անոր ժամանակին մեծ զօրավիգ եղող Ռատօլափիստներուն օրդանն է հետեւեալը կըսէ:

Այդ ճառը և շրջաբերականը ապրիլի 6 ին հաստատուած վճռողական գործին հետ ընկերացած, ակամայեց ակնածելի յարգանք կը ծնեցնեն հանդէպ Մամեղոնացի գործիչները և պետական մարդուն կըստիպեն մտածել միանգամ ընդմիջտ որոշելու իր գիրքը գէպի այդ ընդհանուր ազգային գործը: Այդ խնդրին անաստուածօրէն շահագործումը յուսահատեցուցեր է Մակեղոնացուն և ասոր համար ալ մենք այսօր կը տեսնանք սուր ի ձեռին հայհոյող Պուլկարիան, անոր իշխանը, կառավարութիւնը էքզարքը և ամեն բան ինչ որ կը յարգուի պուլկարէն:

Այդ հայհոյանքները ընկերացած Մակեղոնիա զոհուելու գացող պուլկարներու սպաննութիւններուն հետ պարզօրէն կը ցուցնեն ներքին կազմակերպութեան քաղաքականութիւնը և անոր տրամագրութիւնը գէպի անոնք, որոնք գիտակցաբար կամ ոչ, շուրջ կը յուզեն և կը պղտորեն:

Ներքին կազմակերպութիւնը հրոսախմբեր չի ուզեր ոչ Յուսաստանէն, ոչ Սերպիայէն և ոչ ալ Պուլկարիայէն:

Ան հանդիսաւորապէս կը յայտարարէ որ ով կուզէ Մակեղոնիոյ համար աշխատիլ, նախ և առաջ պիտի հրատարի իր պետութեան Մակեղոնիոյ այս կամ այն մասը գրաւելու հաւակնութենէն. անկէ վերջը երկիր մտնայ իբր զինուոր ներքին, կազմակերպութեան բայց ոչ ճգնի հրամաններ արձակել և ուղղութիւն տալու պիտի լինի կազմակերպութեան հնազանդ գործիքը ամեն տեսակէտով: Պէտքէ ամէն գործ և ամէն քայլ ընէ, նպատակին հասնելու համար, ոչ իր տեսակէտներու համաձայն, այլ երբ այդ կը պահանջէ և կը պարտաւորցնէ ներքին կազմակերպութիւնը:

Մակեղոնիան մակեղոնացիներու համար, լայց ո՛չ պուլկարներու, սերպերու և յոյներու: Մաքուր և անարատ գործունէութիւն ահա ներքին կազմակերպութեան նշանաբանը:

Այս նշանաբանը լաւ խորհված, կապացուցէ որ մակեղոնական կազմակերպութիւնը բաւական հասունցած է և ամրացած: Ան արդէն չի հիանար այն հայրենասէրներով, որոնք հասած են միայն այն հասունութեան, որ կրնան իրենց կեանքը զոհել Մակեղոնիոյ համար, այլ կը փնտռէ կռուողներ որոնք կը գիտակցին թէ կեանքերնին երբ պիտի զոհեն, որպէսզի գործին օգտակար

ըլլան: Ուրիշ խօսքերով ներքին կազմակերպութեան աչքում հայրենասէրը ան չէ որ կը մեռնի հայրենիքին համար, այլ ան որ պարտաւոր է մեռնելու և կը մեռնի միայն այն ատեն երբ այդ կը բաղձայ Մակեղոնիոյ բնակչութիւնը իր ներքին կազմակերպութեան բերանով:

Ու այս շատ մեծ ու յառաջադէմ գաղափար մըն է: Ան շատ բան կը խոստանայ եթէ լիովին իրականանայ, ան հրամայողական կը դառնայ իրերու կացութենէն: Ներկայ պարագաներու մէջ միայն գործունէութիւն միատեսակութիւնն է որ կը յաջողի:

Ներքին կազմակերպութիւնը մտիկ է բնակչութեան. ան աւելի լաւ գիտէ կարիքները եւ պայմանները և միայն ան իրաւունք ունի վարելու բնակչութեան ճակատագիրը:

Այստեղի հայրենասէրները իրաւունք չունին հրոսախմբերով Մակեղոնիա մտնելու առանց բնակչութեան համաձայնութեան:

Միակը ինչ որ կը մնայ ինտելիգենցիային, որ Մակեղոնիոյ և Օտրինի մէջ չի ապրիր, օգնել բարոյապէս, մտաւորապէս եւ նիւթապէս, իսկ ով կուզէ զէն ի ձեռին օգնել, ան պատրաստ է իբր մասնաւոր մարդ երթալ երկիր և հպատակուիլ այնտեղի ընդհանուր կամքին զոր կը զեկավարուի ներքին կազմակերպութենէն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուլէն մայիս 8 ին կը հեռագրեն որ ոստիկանութեան նախարարութեան կից առանձին յանձնախումբ մը կազմուած է Պուլկարիայէն եկող բոլոր ճամբորդներու անձնաւորութիւնը ստուգելու համար:

Թուրք շրջանակներու մէջ կըսեն որ այդ միջոցը ձեռք առնուած է Սուլթանի կեանքին գէմ սպաննութեան փորձերու առջեւը առնելու համար:

Նոյն թուականին Պուլէն կը հեռագրեն որ բարձրագոյն հրամանով թրքական եւ Պուլկարական ապրանքներու ծագման մասին եղած վկայաթուղթերը ազատ պիտի ըլլան գրօջմատուրքէ:

«Պերլ. Թանգլ.» թերթին Պուլէն կը հաղորդեն որ Պուլկարիոյ և Թուրքիոյ յարաբերութիւնները ազէկցած են:

Մայիս 7 ին Պուլէն կը հեռագրեն որ նախարարական ժողովը որոշեր է Սուլթանին առաջարկել իր որոշումը Ալպանիայէն մէկ վերայէթ մը կազմել, կազմուած Տիակովա, Տէպր

Իպէկ, Տիտովօ սանյաքներէն: Այդ վերայէթին կառավարիչը ուղղակի Գրան հետ յարաբերութեան մէջ պիտի ըլլայ:

Սերպ եւ Ռումանական միջադէպերը դեռ վերջացած չեն: Կեանք պետութիւններ ասոնք կը պաշտպանեն:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Գուրբաթի վերագարձը կը հերքուի:

Րօմտէնսովէնսկի հիւանդ է, եւ ցարէն խնդրած է որ թոյլ տրուի իրին ետ դառնալ:

Կը կարծուի որ ասոր պիտի փոխանորդէ Պօքիլով:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Հօնքօնկէն կը հաղորդեն որ կապասուի ճարտարներու յարձակումը Վլատիվոսթօքի վերայ: Օտարահպատակ վաճառականական ներկայացուցիչներուն հրամայուած է հեռանալ Վլատիվոսթօքէն:

Մանիլայէն կը հեռագրեն որ Ռուսական նաւատորմի զկերթայ գէպի հիւսիս:

Ռուս պաշտօնական թերթի մէջ յայտարարուած է ձաբոնիոյ Մանչուրական բանակը պէտք եղած օգնութիւնները ստացած է և արդէն պատրաստ է ճակատամարտը սկսելու:

Ա Ջ Դ

Աղքատ. Ընկեր. Գործ. Ժողովս կուգայ հրապարակաւ յայտարարել թէ Ընկերութեան ի նպաստ սկսած է գանձանակ մը շրջաբերել հաւաքիչ պ. Հ. Գիրիշանի ձեռամբ. իւ կը խնդրէ որ ամեն անհատ անխարօքն մասնակցի սոյն բարենպաստ գործին որուն համար կանխաւ մեր շնորհակալիքը:

Այս առթիւ նաեւ կուգայ խնդրել այն արգոյ ազգայիններէն, որոնք ինքնաբերաբար փափաքած են ընկերութեան ամսական վճարում մը ընել, հաճին ըստ առաջնոյն վճարել հաւաքին, ստանալով իրենց ընկալազրեքը, որպէս զի Գործ. Ժողովս կարենայ միտ նպաստել իրեն գիմող ազգասները:

Ի դիմաց Աղքատ. Ընկեր. Ատենադպիր Ատենապետ Յ. Ազապար Մ. Գարագաշեան

Շուկայի «Պետ. Պուլկարացի» ընթերցարանին մէջ կը ծախուի Հայ Յեղ. Դանակցութեան բարձրագոյն գակ ոսկեգօծ զինանշանը գածէ խիստ քեղզ պատրաստուած 49—43 սն. մեծութեամբ, Արձանագործ Պ. Քորէն Փափազեանէ. որ զեղարուեստական գնահատելի գործ մըն է:

Կարծէ որ ամեն հայ ու շաշակցական ընկեր ունենայ ան իր սենեակին մէջ:

Գրին է 10 ֆրանք կանխիկ, դիմել Շուկայի «Պետ. Պուլկարացի» ընթերցարանի վարչութեան:

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатница „Взвѣность“ Варна